Ընտրություններ հավերժության համար, Մաս 3

Իմացեք ձեր դարձին վերաբերող ճշմարտությունը: Ճշմարտությունն այն է, որ դուք պետք է պատասխանատվություն ստանձնեք ձեր անձնական դարձի մեջ: Ոչ ոք չի կարող անել դա ձեր փոխարեն:

Այժմ, եկեք քննարկենք մի քանի հարց: Ցանկանո՞ւմ եք խաղաղություն զգալ այն մտահոգությունների առնչությամբ, որոնք այժմ տանջում են ձեզ: Ցանկանո՞ւմ եք ավելի լավ ճանաչել Հիսուս Քրիստոսին: Ցանկանո՞ւմ եք իմանալ, թե Նրա աստվածային զորությունը ինչպես կարող է բուժել ձեր վերքերը և թուլությունները: Ցանկանո՞ւմ եք ձեր կյանքում զգալ Հիսուս Քրիստոսի Քավության քաղցր, հանգստացնող զորությունը:

Այս հարցերին պատասխանելու ձգտումը կպահանջի ջանքեր՝ մեծ ջանքեր: Ես խնդրում եմ ձեզ, որ պատասխանատվություն ստանձնեք ձեր վկայության համար: Աշխատեք դրա համար: Պահպանեք այն: Հոգ տարեք դրա մասին: Զարգացրեք, որ այն աճի: Սնուցեք այն ճշմարտությամբ: Մի աղտոտեք այն անհավատ տղամարդկանց և կանանց կեղծ փիլիսոփայություններով, իսկ հետո զարմացեք, թե ինչու է ձեր վկայությունը նվազում:

Ամեն օր ջերմեռանդ ու խոնարհ աղոթեք: Սովորեք հնագույն և ժամանակակից մարգարեների խոսքերը: Խնդրեք, որ Տերն ուսուցանի ձեզ, թե ինչպես ավելի լավ լսեք Նրան: Ավելի շատ ժամանակ անցկացրեք տաճարում և ավելի շատ ժամանակ հատկացրեք ընտանեկան պատմության աշխատանքին:

Երբ ձեր վկայությունը դառնա ձեր առաջնահերթությունը, կտեսնեք, որ հրաշքներ են կատարվում ձեր կյանքում:

Եթե հարցեր ունենաք, իսկ ես հուսով եմ, որ կունենաք, պատասխաններ փնտրեք՝ հավատալու մեծ ցանկությամբ: Ավետարանի մասին սովորեք այն ամենը, ինչ կարող եք, և չմոռանաք առաջնորդության համար դիմել ճշմարտությամբ լի աղբյուրներին: Մենք ապրում ենք մի տնտեսության մեջ, երբ «ոչինչ ետ չի պահվի» [Վարդապետություն և Ուխտեր 121.28]: Դրանից հետո, ժամանակի ընթացքում Տերը կպատասխանի մեր բոլոր հարցերին:

Միևնույն ժամանակ, ընկղմվեք հայտնության հարուստ ջրամբարում, որը հասանելի է մեզ: Ես խոստանում եմ, որ դա կամրապնդի ձեր վկայությունը, նույնիսկ, եթե ձեր որոշ հարցերի պատասխանները դեռևս չեն տրվել: Անկեղծ հավատքով տրված ձեր հարցերը *միշտ* կհանգեցնեն ավելի մեծ հավատքի և ավելի շատ գիտելիքի: . . .

Երբ դուք պատասխանատվություն եք ստանձնում ձեր վկայության համար և օգնում, որ այն աճի, դուք դառնում եք ավելի հզոր գործիք Տիրոջ ձեռքում: Դուք «կոգեշնչվեք արդար գործից» [Ալմա 43.45]՝ Հիսուս Քրիստոսի գործից:

Այս երկրի վրա ավելի կարևոր բան չկա, քան հավաքել Իսրայելը *Նրա համար*: Թող ձեր Երկնային Հայրն իմանա, որ դուք ցանկանում եք օգնել: Խնդրեք Նրան, որ ձեզ լծի այս փառահեղ գործին: Իսկ հետո նայեք կողքից և հիացեք, թե ինչ է տեղի ունենում, երբ թույլ եք տալիս, որ Աստված տնօրինի ձեր կյանքում:

Իմ սիրելի երիտասարդ ընկերներ, ես սիրում եմ ձեզ: Ես շնորհակալ եմ ձեզ: Ես հավատում եմ ձեր ներուժին: Որպես Տիրոջ մարգարե՝ ես օրհնում եմ ձեզ, որ իմանաք ճշմարտությունը ձեր ով լինելու մասին, և արժևորեք ճշմարտությունն այն մասին, թե իրականում ինչ փառահեղ ներուժ ունեք: Ես օրհնում եմ ձեզ, որ պատասխանատվություն ստանձնեք ձեր վկայության համար: Եվ օրհնում եմ ձեզ, որ ունենաք ցանկություն և ուժ՝ պահելու ձեր ուխտերը:

Եթե դա անեք, ես խոստանում եմ, որ դուք կզգաք հոգևոր աճ, վախից ձերբազատում և այնպիսի վստահություն, որը դժվար թե հիմա պատկերացնեք: Դուք դրական ազդեցություն թողնելու ուժ կգտնեք, որը վեր կլինի ձեր բնական կարողություններից: Եվ ես խոստանում եմ, որ ձեր ապագան ավելի ոգևորիչ կլինի, քան այն, ինչին այժմ կարող եք հավատալ: (Ռասսել Մ. Նելսոն, «Ընտրություններ հավերժության համար» [համաշխարհային հոգևոր հավաք չափահաս երիտասարդների համար, 15 մայիսի, 2022], broadcasts.ChurchofJesusChrist.org)

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_544_handout-3